



ՓՈՒՆԸՄԲՈՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԵՎ

ԿՈՐԵԱՅԻ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ
ՄԻՋԵՎ

Նախաբան

Գյուտարարության և հետազոտությունների բնագավառում փոխադարձ հետաքրքրությունների զարգացման նպատակով՝ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալությունը (ՄՍԳ) և Կորեայի գյուտարարության խթանման ասոցիացիան (ԿԳԽԱ) սույնով համաձայնում են հետևյալի վերաբերյալ.

Կորեայի գյուտարարության խթանման ասոցիացիան՝

- Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության հետ կիսվում է մտավոր սեփականության ոլորտում իր ուսումնական ծրագրերով.
- մտավոր սեփականության ոլորտում ուսուցման մշակույթը խթանելու և երկու կազմակերպությունների միջև սերտ կապերը խորացնելու նպատակով զարգացնում է տեղեկատվության փոխանակումը, կադրերի փոխանակումը և ոլորտին վերաբերող այլ հարցեր.

Սույն համագործակցությունը զարգանում է երկու կազմակերպությունների համապատասխան վարչությունների և ստորաբաժանումների միջև, որոնք նախատեսված են սույն Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում ձեռք բերված համաձայնություններով:

Հոդված 1

Հայաստանի Հանրապետությունում մտավոր սեփականության ոլորտում կրթության մակարդակի զարգացման նպատակով՝ ԿԳԽԱ-ն և ՄՍԳ-ն ապահովում են մտավոր սեփականության ոլորտին առնչվող ուսումնական նյութերով, որոնք ներառում են, բայց չեն սահմանափակվում առցանց դասընթացներով, խաղերով և դասագրքերով:

Հոդված 2

Կորեայի գյուտարարության խթանման ասոցիացիան օժանդակում է մտավոր սեփականության ոլորտին առնչվող ուսումնական ծրագրերի մշակմանը Հայաստանի Հանրապետությունում օգտագործելու համար՝ դրանց արդյունավետությունը առավելագույնի հասցնելու նպատակով:

Հոդված 3

Կողմերը համագործակցում են մտավոր սեփականության ոլորտում մարդկային ռեսուրսների զարգացման գործում, ներառյալ՝ ուսանողների դասավանդումը, ուսուցիչների վերապատրաստումը և այս ոլորտում մտքերի ու փորձի փոխանակումը՝ սեմինարների, աշխատաժողովների, կլոր սեղանների և ցուցահանդեսների կազմակերպման միջոցով:

Հոդված 4

Կողմերը համաձայնում են խրախուսել հետազոտությունների, տվյալների, հրապարակումների և մտավոր սեփականության հետ կապված նյութերի փոխանակումը:

Հոդված 5

Յուրաքանչյուր կողմ համաձայնում է հրավիրել մյուս կողմի ներկայացուցիչներին մասնակցելու փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող լայնածավալ համաժողովներին, գիտաժողովներին և ցուցահանդեսներին:

Հոդված 6

Սույն Փոխըմբռնման հուշագիրը չի բացառում երկու կողմերի ցանկությամբ փորձի փոխանակման այլ ձևերի կազմակերպման և սույն Փոխըմբռնման հուշագիրը ընդլայնելու հնարավորությունը:

Հոդված 7

Յուրաքանչյուր կողմ առաջադրում է իր ներկայացուցչին, ով պատասխանատու կլինի սույն Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում ձեռնարկվելիք բոլոր միջոցառումների համար:

Հոդված 8

Սույն Փոխըմբռնման հուշագիրն ուժի մեջ է մտնում երկու կազմակերպությունների կողմից այն վավերացնելու օրվանից, և գործում է մեկ տարի: Կազմակերպություններից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Փոխըմբռնման հուշագիրը, պայմանով, որ նման մտադրության մասին գրավոր ծանուցում կներկայացվի դադարեցման օրվանից առնվազն 6 ամիս առաջ: Ընթացքի մեջ գտնվող պարտավորությունները պետք է ավարտվեն:

Հոդված 9

Սույն Փոխըմբռնման հուշագրում լրացումները կամ փոփոխությունները կատարվում են գրավոր և ստորագրվում են կազմակերպությունների համապատասխան լիազորված ներկայացուցիչների կողմից:

Հոդված 10

Սույն Փոխըմբռնման հուշագիրը ստորագրվում է երկու բնօրինակով, կազմակերպություններից յուրաքանչյուրը դրանցից ստանում է մեկ օրինակ:

Ստորագրվել է 2019 թվականի նոյեմբերի 18-ին:

Հայաստանի Հանրապետության

Էկոնոմիկայի նախարարության

Մտավոր սեփականության գործակալություն

Կորեայի գյուտարարության խթանման

աւոցհացիա



ԵՐԵՄ ԶԱԽՈՅԱՆ

ՊԵՏ



ՋՈՒՆՀՈ ՔՈՆ

ՆԱԽԱԳԱՀ